



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նույը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

189

Жиңінген жаңылар
және үйлесулерде
орында

Ресей - 1940

8
U-86

ՍՈԼՈՐԵԱԼ
ՃԱՄԲՈՐԴԸ
ԿԱՄ

ԶԻՆՈՒԹՐԱԿԱՆ ՕԹԵՒԱՆ

ԾԻՆԱՂԱՇԱՐԺ ԿԱՏԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ

ՄԵԿ Ա. Ր. Ա. Ր. Ո. Վ.



1940

Հրատարակութիւն

Հպագրութիւն

G. DONIGUIAN

Rue Nahr (St. Michel)

Beyrouth - Liban

8
Մ-86

ՍՈԼՈՐԵԱԼ

ՃԱՄԲՈՐԴԸ

Կ Ա Մ

ԶԻՆՈՒԻՌԱԿԱՆ ՕԹԵՒԱՆ

ԾԻԾԱՂԱՇԱՐԺ ԿԱՏԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ

Մ Է Կ Ա Ր Ա Ր Ո Վ



1940

Հրատարակութիւն

Տպագրութիւն

G. DONIGUIAN

Rue Nahr (St. Michel)

Beyrouth - Liban

Ե 2003

ՄԱԼՈՐԵԱԼ ՃԱՄԲՈՐԴԸ
ԿԱՄ
ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ՕԹԵՒԱՆ

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

ԲԱՐԲԱՆԻԿՈՍ. — Գիւղացի:

ՊՐԻՃԻՏԵ. — Իւր կինը:

ԲԱՆԿՐԱՏԻՈՍ. — Պրիճիտեի վարժապետ սիրահարը

ԲԵԹՈԱԲՅ. — Յիսնապետ. «Մոլորեալ ճամբորդը»:

ՊՐՈԿՈԼՈՍ. — Մառայ:

(Անգքն է Ֆրանսայի գլուղերէն մէկուն մէջ):



59772-ամ



2406 - 72

ՏԵՍԻԼ Ա.

ԳԽԳՁՈՒԿ ՍԵՆԵԱԿ ՄՋ

Պրինիտէ եւ Պրոկոլոս

ՊՐՈԿ. — Ըստծիս պէս, սիրեցեալ սիկին Պրիճիտե, մենք կը հոգնինք մեծերնիս կ'ուտեն, մենք կը մշակենք անոնք կը հնձեն, չէնք շնորհք բան մ'ալ վաստինք նէ ձեռքերնուս կ'առնեն:

ՊՐԻՃ. — Հոգը պղտիկ յարդերը կը ցրուէ, ստակը ստակին ետեւէն կը վազէ կ'ըտեն, չե՞ս գիտեր:

ՊՐՈՒԿ. — Ասոր հետ մէկաեղ, իրաւունք ալ ունին:

ՊՐԻՃ. — Աշխարհը միշտ ասանկ եղած է:

ՊՐՈՒԿ. — Երիկդ ինձմէ բախտաւոր է:

ՊՐԻՃ. — Ի՞նչպէս . . .

ՊՐՈՒԿ. — Մէկաեղ սեղան կը նստիս, ալ ի՞նչ կ'ուզես:

ՊՐԻՃ. — Զարմանու լի բան, ատկէ ի՞նչ կ'ելլայ:

ՊՐՈՒԿ. — Երկու գլուխ էք, զաւակ չունիք բան չունիք:

ՊՐԻՃ. — Քեզի բան մը ըստմ, թոզ էրիկս հոս ըլլայ, ալ ուրիշ բան չեմ ուզեր (մեկուսի) ի՞նչ ձանձրացուցիչ մարդ:

ՊՐՈՒԿ. — Նայէ՛, այս պիշեր զուրուր պիտի մեայ:

ՊՐԻՃ. — Նորէն կ'ըսէ թէ ատոր համար շատ արտումեմ:

ՊՐՈՒԿ. — Ահա առաջին անգամ կը տեսնեմ կին մը, որ էրկանը չի գտուն վրայ կը տրտմի:

ՊՐԻՃ. — Անդէ հասկցեր որ տունը չգտնուած իրիկունը մութը կոխելուն պէս՝ անկողին կը մանեմ. (մեկ.) դեռ չերթար

ՊՐՈՒԿ. — Կարելի՞ բան է:

ՊՐԻՃ. — Եթէ հոս չըլլայիր, մինչեւ հիմա քնացած էի. (մեկուսի) չի հասկնար:

ՊՐՈՒԿ. — Առանձ է նէ՛ ելլեմ և թամ, դիմու ցաւ չըլլամ:

ՊՐԻՃ. — Գուշեր բարի աւը Պրոկոլ, շատ չո ո բարեւ կընկանը քՄեկնելու պէս:

ՊՐՈՒ. — Գլխուս վրայ մնաս բարով. . . չի մոռնաս, է-
րիկդ գայ նէ ըսես "որ իրեն ըսելիք մը ունիմ:

ՊՐԻԾ. — (մեկուսի) Գոցուելիք բերան, (բարձր) կ'ըսեմ,
կ'ըսեմ, զիշեր բարի:

ՊՐՈՒ. — Գիշեր լոյս բարի (կը մեկնի):

ՏԵՍԻԼ Բ.

ՊՐԻՖԻՏԻ մինակ, ետք թերոախ

ՊՐԻԾ. — Ինչ որ է գնաց, կարծես թէ դիտմամբ կ'ընէր,
աղէկ երեսս բռնեց, եթէ թոյլ վարուէի, ո՞վ դիտէ մինչեւ
երր հոս պիտի մնար և գլխուցաւ պասճառեր: (դուրսէն դուռը
կը զարնուի) դուռն է, ո՞վ է այս:

ԲԵՅԹ. — (դուրսէն) Այս զիշերուան համար զինւորական
օթեւան մը:

ՊՐԻԾ. — (մեկ.) Զինւորական օթեւան մը, վայ ինձ,
ի՞նչ ընելու եմ:

ԲԵՅԹ. — (նյունպէս) Ճամբէս մոլորեցայ, վասն զի ձիւնը
ճամբաները գոյցեր է. և չպիտի կրնամ տեղս հասնիր:

ՊՐԻԾ. — Աստուած իմ, հիմա ի՞նչ պիտի ընեմ:

ԲԵՅԹ. — Պիտի բանա՞ք թէ ոչ. ցրտէն կը սարսոիմ դուռը:

ՊՐԻԾ. — Բայց...մինակ եմ:

ԲԵՅԹ. — Մինակ կամ ընկերով եղիք. ձեր ամուսնոյն մէկ
բարեկամն եմ, դուռը բացէք:

ՊՐԻԾ. — (մեկուսի) Ճար չիկայ, բանալու է. (կը բանայ
ու թերոախ կը մընէ):

ԲԵՅԹ. — (Մտած ատենը) Մա՛հ, և դժոխք. այսչափ դժուար
է դուռ մը բանալդ:

ՊՐԻԾ. — Կը վախնայի:

ԲԵՅԹ. — Սատանա՞ն է եկողը որ կը վախնաս. Բարբանի-
կոս/ն տունը աս չէ. ահա իր հասցէն:

ՊՐԻԾ. — Ճիշդ. ան է:

ԲԵՅԹ. — Թէպէտ և զքեզ առաջին անդամ կը տեսնեմ:

ՊՐԻԾ. — Այո՛:

ԲԵՅԹ. — Իր կին բլաւու ես:

ՊՐԻԾ. — Այո պարոն. (մեկ.) Գալու տաենը գտաւ:

ԲԵՅԹ. — Շիտակը ըսեմ էրկնէդ աւելի ես զքեզ կը սիրեմ:

ՊՐԻԾ. — (մեկ.) Ասոր ձեռքէն ի՞նչպէս ազատելու է:

ԲԵՅԹ. — Բա՛է, նազելիս, ամուսինդ ո՞ւր է:

ՊՐԻԾ. — Բուաթիէ դիւղը զնաց, այս իրիկուն չի դար:

ԲԵՅԹ. — Զըսե՞ս յարմար տաենին եկեր եմ քեզի հետ տե-
սակցելու:

ՊՐԻԾ. — Շնորհակալ եմ, մե՛ղք որ քունս եկած է (մեկ.)
աս պակաս էր:

ԲԵՅԹ. — Գիւղացիի կերպեր մի բանեցներ:

ՊՐԻԾ. — Յուսամ թէ խոհեմ էք, և այս առիթէն չէք
ուղեր օգտուիր:

ԲԵՅԹ. — Այդ ալ խօսք է. քիչ մը հետդ մնամ, քանի մը
գաւաթ գինի նետեմ, և մինչեւ որ քունս գայ՝ երգեմ ու խօ-
սիմ. ասկէ աւելին չեմ ուղեր:

ՊՐԻԾ. — Շնորհակալ եմ պարոն, բայց իմ աչքերս քու-
նէն ծանրացած են, (մեկ.) ինչպէս խալըսելու է ասոր ձեռքէն:

ԲԵՅԹ. — Բայց ես զեռ նոր եկայ քիչ մը հետս կենալու ես:

ՊՐԻԾ. — Հսածդ ըլլալիք բան չէ. երբ ամուսինս հոս
չըլլայ շուտ մը սենեակս կը քաշուիմ, ու չի ճանչցած մար-
դուս հետ չեմ տեսնուիր:

ԲԵՅԹ. — Տեսնուէ որ ճանչնաս:

ՊՐԻԾ. — Խօսք չե՞ս հասկնար:

ԲԵՅԹ. — Բարբանիկոսի պէս ամուսին մը ունենալէդ ետ-
քը այսչափ կոտրառուելդ ի՞նչ պիտի ըլլայ:

ՊՐԻԾ. — Ի՞նչ ըսել կ'ուղես պարոն. մենք պարկեշտ կո-
ղակիցներ ենք, կը հասկնա՞ս:

ԲԵՅԹ. — Ահա այսօր կանանց մէջ ամէնէն առաքինին գտայ
ՊՐԻԾ. — Ուզածդ ըսէ բայց գիտցիր որ այս լերանց
մէջ կը բնակին պարկեցառութիւն ու առաքինութիւն:

ԲԵՅԹ. — Տաներկու տարուան զինուոր եմ շատ մը քա-
ղաքներ պտղացայ, կրնամ ըսել թէ տակաւին նմանդ տե-
սած չէի:

ՊՐԻԾ. — Գեղեցիկ գաղափար մը ունիս կանանց վրայ:

ԲԵՅԹ. — Ի՞նչ ընեմ. իրենց գործերէն կը գտանեմ:

ՊՐԻԾ. — Լաւ, բայց ձկէ որ զործիս երթամ այս է քու
ճրագգ, այս սանգուղէն վեր ելածիդ պէս պառկելու սենեակդ է

ԲԵՅԹ. — Քունս եկած չէ:

ՊՐԻԾ. — Իմս եկաւ, զիշեր բարի:

ԲԵՅԹ. — Անունգ ի՞նչ է:

ՊՐԻԾ. — Պրիճիտէ:

ԲԵՅԹ. — Ի՞նչ անուշիկ անուն. եկուր Պրիճիտէ, մէկ մէկ
գաւաթ գինի պարպենք:

ՊՐԻՃ. — ԶԵՄ ՌԵՎԵՐ, ԿԵ ՀԱՍԿՆԱՇԱ:
ԲԵՒԹ. — Բայց խմելու է, ճար չի կայ:
ՊՐԻՃ. — ԱԼ ՔԱԼԵԿԻՆ է, քաջ զօրակա ու իր պատիւը
ԿԵ ՃԱՆՀՆԱՅ:

ԲԵՒԹ. — Այդ վիրաւորիչ խօսքերուդ պատասխանելով,
ես ալ պիտի ըսկմ որ աանաթիկնող մը խորհուրդներուն կարօտ
չեմ, հասկցա՞ր, յաւ, հիմա դնա պառկէ, վաղը յուսամ թէ
աւելի քաղաքավար կ'ըլլաս:

ՊՐԻՃ. — Վաղուան համար խօսք չունիմ. գիշեր բարի,
ճրագը մարէ որ վասնգ մը չի պատահի:

ԲԵՒԹ. — Հոգ մի՛ ըներ:

ՊՐԻՃ. — (մեկ.) Փառք Աստուծոյ աղէկ խալըսեցայ (մեկնի)
ԲԵՒԹ. — Որու մտքէն կ'անցնէր որ ասանկ յիսնային տեղ
մը այսպիսի առաքինի կին մը կը գտնուէր, բայց վաղը ասոր
երակը աղէկ մը զննել կ'ուզեմ (սանդուխնին կ'ելլե):

ՏԵՍԻԼ Գ.

Բանկրուտիս դուռը բանալով կը մտնէ. կը զոցէ, սեւ
վերարկու մը առած է. ձեռքը ուտելիխով լեցուն կողով մը:

ԲԵՒԿ. — Այս մթութիւնն ի՞նչ ըլլալու է, արդեօք իմ
աղորիկ սիրունիկ ՊՐԻՃԻՏԷ քնանալո՞ւ զացեր է, հոս քիչ
մը կենալ պէտք եղաւ, բերածներս կոտրել չեմ ուզեր. (կո-
ղովը անկիւն մը դնելեն եսքր) Կամացուկ մը երթամ ՊՐԻՃԻ-
ԹԵՐՍ սենեակին դուռը փնտոեմ:

ՏԵՍԻԼ Գ.

Նոյն, ՊՐԻՃԻՏԵ (մութին)

ՊՐԻՃ. — Մութը կոխեց, կարծեմ թէ քնացած ըլլալու-
է մեր պարոնը,

ԲԵՒԿ. — Մօտն ըլլալու եմ, բայց այս խաւարիս մէջ
բան մը չեմ տեսնար:

ՊՐԻՃ. — Հոս մէկը ըլլալու է. ի՞նչպէս կը դողամ:

ԲԵՒԿ. — Եթէ չեմ խարուիր, ոտնաձայն կայ,

ՊՐԻՃ. — Առ ո՞վ է:

ԲԵՒԿ. — Ես եմ:

ՊՐԻՃ. — Դու ո՞վ ես:

ԲԵՒԿ. — Եմ ՊՐԻՃԻՏԷ ես եմ, չճանչցա՞ր:

ՊՐԻՃ. — Ի՞նչ անիծեալ սովորութիւն ունիս, ասանկ զադ-
տագողի ներս մանելու, բսի քեզի ուրիշ անդամ որ հոս մարդ
չեղած ատեն բանալիզ չի գործածես:

ԲԵՒԿ. — Բայց ամուսինդ դուրսն է և կարծեմ թէ. . .

ՊՐԻՃ. — Զգիտե՞ս թէ վայրկեան մը առաջ ճամբէն մո-
լորուած յիսնապետ մը եկաւ գիշերը հոս անցնելու:

ԲԵՒԿ. — Վա՞յ թշուառական: [քայ]:

ՊՐԻՃ. — Կամաց խօսէ, կեցիր երթամ ճրագը առնեմ (կեր-
ԲԵՒԿ. — Գնա սիրունիկս և անհամբեր քեզի կ'սպասեմ
սա յիսնապետին զալն էր պակաս. համբերութիւնս կը հատ-
նի. զինուոր բածդ կնկան հետ ձգելը աղէկ բան չէ, մանա-
ւանդ ՊՐԻՃԻՏԷ պէս աղւոր աչուի մը, ո՞հ. . . աչքերս չորս
բանալու եմ:

ՊՐԻՃ. — Ահա ճրագը:

ԲԵՒԿ. — Փառք Աստուծոյ որ լոյս աչքով երեսդ տեսայ:

ՊՐԻՃ. — Զայն մի հանէր, այդ զինուորին վրայ շատ ա-
պահով չեմ:

ԲԵՒԿ. — Յոզնած ըլլալու է. կը քնանայ:

ՏԵՍԻԼ Ե.

Նոյն եւ Բեր (սանդուղին վրային)

ԲԵՒԹ. — (մեկ.) Վարը մէկը ըլլալու է:

ՊՐԻՃ. — Ի՞նչ աղւոր բաներ բերիր հետդ, նայիմ:

ԲԵՒԿ. — Ահա մեր փոքրիկ ճաշը:

ԲԵՒԹ. — (մեկ.) Լաւ, ես ալ կը ճաշեմ:

ՊՐԻՃ. — Կողովդդ մէջ ի՞նչեր կան:

ԲԵՒԿ. — Մաքառնեաներ. . . բայց ի՞նչ բան. . . ըհ. . .

մա, մա, մա, (կողովին հանելով):

ԲԵՒԹ. — (մեկ.) Մաքառնեաին սիրահարն եմ:

ԲԵՒԿ. — Առ քեզի խոզի խարոված աղդը մը:

ԲԵՒԹ. — (մեկ.) Առ ալ կը կլլեմ:

ԲԵՒԿ. — Առ երիկիր սքանչելիի է:

ԲԵՒԹ. — (մեկ.) Մքանչելիի որովհետեւ գինի կը վերցնէ:

ՊՐԻՃ. — Հիմա խելքս կը թրցնեմ:

ԲԵՒԹ. — (մեկ.) Ես ալ:

ԲԵՒԿ. — Ասսնք երկու շի հին գինի են. որ բարեկամ

մը ինձ ընծայեց:

ԲԵՒԹ. — (մեկ.) Հին գինի. . . ո՞վ բաղդ:

ԲԵՒԿ. — Է՛, ի՞նչ կ'ըսես:

ՊՐԻՃ. — Առ մաքսոնեաները տաքցնելու է քառորդի

մը գործ է:

ԲԵՒԹ. — (մեկ.) Երաւ, անոնց պաղը չուտուիր:

ԲԵՒԿ. — Գնա, ես ամէն բան կարգի կը զնեմ. . . բայց

ուտ եկուը, կոկորդս թմբուկ կը գարնէ:

ՊՐԻՃ. — Երթալ գալու մէկ կ'ըլլայ (Պնակերը կը տանի)
 ԲԱՆԿ. — Շատ ճշմարիտ է, կերակուրը սիրած մարդուդ
 հետ ուտես նէ՝ ախորժակդ կը տասնապատկուի:
 Բէթ. — (մեկ.) Իմ ախորժակս բացուելու կարօտ չէ:
 ԲԱՆԿ. — Ուեղանը դնենք:
 Բէթ. — (մեկ.) Ի՞նչ տաքարիւն մարդ է:
 ԲԱՆԿ. — 2 սկաւառակ, 2 անձեռոց, զոյզ մը գտւաթ,
 ամէն բան իր տեղն է:
 Բէթ. — (մեկ.) Իմ բաժինս պակաս է:
 ԲԱՆԿ. — Երթամ աղ պղպեղ եւայլն բերեմ:
 Բէթ. — (մեկ.) Սըւոր նայեցէք, տաք տաք տպտակ մը
 իջեցնելու կուգայ, բայց անուշութեամբ հրթանք:
 ԲԱՆԿ. — Ո՛յ, սիրունիկս, ո՞չչափ ալ ուշացաւ, երթամ
 նայիմ, ի՞նչ կ'ընէ:
 Բէթ. — (մեկ.) Մ'երթար, մ'երթար զործդ գէշ կ'ըլլայ:
 ԲԱՆԿ. — Ահա եկաւ (Պրինիտէ կը մտնէ):
 ՊՐԻՃ. — Մինչեւ որ տաքնայ, քիչ մը խօսինք:
 ԲԱՆԿ. — Այս աղւորիկս, խօսինք, նայինք սա զինուոր
 ըսածդ ի՞նտոր մարդ է, սպա՞յ է:
 ՊՐԻՃ. — Չեմ կարծեր:
 ԲԱՆԿ. — Ուրեմն ի՞նչ է:
 Բէթ. — (մեկ.) Հիմու պիտի տեսնես:
 ՊՐԻՃ. — Հստ իս անառակին մէկն է:
 ԲԱՆԿ. — Սա ձախորդ եկաւ, անանկերը շատ կը սիրեն
 զուրձանալ:
 Բէթ. — (մեկ.) Ես քեզ կը հասկցնեմ ինչ ըլլալու:
 ԲԱՆԿ. — Թէ որ ամուսինդ վաղն ալ չի վերագառնայ՝ ևս
 ասկէ չի պիտի զատուիմ:
 Բէթ. — (մեկ.) Ո՞ւր տեղէն բրթաւ առ նորաձեւ տոսկեալը:
 ՊՐԻՃ. — Բայց վաղը զպրոց չի կա՞յ:
 ԲԱՆԿ. — Ի՞նչ դպրոց, ի՞նչ դպրոց:
 ՊՐԻՃ. — Ի՞նչ պիտի ընես, ետքը չըսեն որ...
 ԲԱՆԿ. — Հսելիքնին ի՞նչ է, վաղուան տեղ դալ Հինգ-
 չորթի կուտամ դասր:
 Բէթ. — (մեկ.) Աղէկ դաստառ:
 ՊՐԻՃ. — Թէ որ մէկը տեսնէր...
 ԲԱՆԿ. — Ուեկորդ խօսքեր մի ըներ, իմ նաղելիս, առ
 անկ պարագայի մէջ պէտք եղած զգուշութիւնները, կամ,
 չիտակը ըսելով՝ վարպետութիւնները գիտեմ:

Բէթ. — (մեկ.) Ես ալ գտն կ'առնեմ, նայինք ինչպէս պի-
 տի պատասխանեմ:
 ԲԱՆԿ. — Վշտացած ըլլամ նէ, բարկութիւնս տղաքնե-
 րէն կը հանեմ:
 Բէթ. — (մեկ.) Այդ աղորդ վրէժը ես պիտի լուծեմ:
 ՊՐԻՃ. — Նայէ եթէ ձախորդ ըլլայ վախճանը՝ մէյ մ'ալ
 տունս ոտք չես կոխեր:
 ԲԱՆԿ. — Հիմա նստինք փորերնիս կշտացնենք:
 ՊՐԻՃ. — Կեցիր երթամ մաքառօնեան բերեմ: (կերպայ)
 Բէթ. — (մեկ.) Երկուքիդ ալ ախորժակը հիմա կը գոցեմ:
 ԲԱՆԿ. — Ի՞նչ ախորժակ ունիմ: (Պրինիտէ կը մտնէ):
 Բէթ. — (մեկ.) Կ'անցնի, կ'անցնի:
 ԲԱՆԿ. — Ապուրը սըտեզ, խորտիքը հոն:
 ՊՐԻՃ. — Երկուչափութիւն պէտք չէ, հո՞ս:
 Բէթ. — (մեկ.) Սա մարզը վայելու չ բաներ զիտէ:
 ԲԱՆԿ. — Սա մաքառօնէն մէյ մը ա՛ո նայիմ:
 ՊՐԻՃ. — Մատներս պիտի լզեմ:
 ԲԱՆԿ. — Ես ահա ասանկ կը ճարեմ ուտելիքս:
 (Պուրսին դուռը կը զարնուի)
 ՊՐԻՃ. — Դուռն է:
 ԲԱՆԿ. — (Պող ելած) Դուռն է մի՛, ո՞վ կրնայ ըլլալ:
 Բէթ. — (մեկ.) Առ քեզի փորձանք մ'ալ:
 ՊՐԻՃ. — Ո՞ւսղ, լոէ (Բարձր) ան ո՞վ է:
 Փ Ը. — (Պուրսին) Ես եմ, Պրիճիտէ, բաց:
 ՊՐԻՃ. — Երիկս է, ո՞հ, բաներնիս բռսաւ:
 ԲԱՆԿ. — Երիկդ մի՛... ո՞յ նզովից ծնունդ:
 Բէթ. — (մեկ.) Առ ի՞նչ աղուոր տեսարան:
 ՊՐԻՃ. — Կեցիր, ձրագ մը վասեմ ու հազուիմ:
 ԲԱՆԿ. — Վոյ կերպակուրիս զիխուն, լմիցայ:
 Փ Ը. — (Պուրսին) Պրիճիտէ չի բանա՞ս:
 ՊՐԻՃ. — Կեցիր սա ձրագ վասեմ, հիմա կուզամ: Դուռ
 ո՞ւր պիտի պահուրախս:
 ԲԱՆԿ. — Չեմ գիտեր, տենդս բռնեց:
 ՊՐԻՃ. — Սա մասնիք մտիր, կծէի:
 ԲԱՆԿ. — Մասնիք մի՛, ես որ կը սոսկամ մուկերէ:
 ՊՐԻՃ. — Ուրիշ ձար չի կայ, (խորը կը բանայ) շուրջ,
 քեզ նայիմ:
 ԲԱՆԿ. — Գթութիւն, մկան ձրգը լսածիս պէս՝ ձայնս կը
 ձգեմ, (Պրինիտէ զայն խորչին մէջ կը երե ու կը զոցի):
 Փ Ը. — (Պուրսին) Պրիճ/տէ ի՞նչ, կ'ընես, չես՝ գոր:

ՊՐԻՃ. — Ահա եկայ, (զուոք կը բանայ երիկը կը մՏնէ):
 ՓՈՒ. — Ա՛յ սարսափելի տարի մըն է դուռը կ'սպասեմ:
 ՊՐԻՃ. — Իմ սիրուն էրիկս, անկողինն էի, մինչեւ որ
 հագուիմ, ճրագը վառեմ գամ ըսի:
 ԲԵՅԹ. — (մԵկ) Նայեցէք, ինչպէս սուտերը կը շարէ:
 ՓՈՒ. — Հագուելիք ի՞նչ պիտի ըլլար:
 ՊՐԻՃ. — Գուցէ հետդ մարդ կար ցուրտ ալ էր:
 ԲԵՅԹ. — (մԵկ) Ա՛յ թշուառական կին:
 ՓՈՒ. — Ի՞նչ ալ կանուխ պառկեր ես:
 ՊՐԻՃ. — Քու բարեկամներէդ յիսնապետ մը, որ ձամբէն
 մուրած է եղեր, այս գիշեր եկաւ հոս պատսպարուելու
 չուզերի որ...:
 ՓՈՒ. — Աղեկ ես ըրեր:
 ՊՐԻՃ. — Վառարանին քովը եկուր որ քիչ մը տաքնաս:
 ՓՈՒ. — Աւելի անօթութիւն կը զգամ քան թէ ցուրտ:
 ՊՐԻՃ. — Ոչ տանը մէջ ուտելիք բան չիկայ, ես ալ բե-
 րանս բան չի դրած անկողին մտայ:
 ԲԵՅԹ. — (մԵկ) Իրաւ է, խեղձը բան մը չի կերաւ:
 ՓՈՒ. — Խոհանոցը զետնախնձոր կայ, գնա՝ տաք մոխի-
 րի մէջ եփէ, գինի ալ կայ, հաց ալ կը գտնեմ աս իրիկուն
 ալ ասանկ կ'անցունենք:
 ԲԵՅԹ. — (մԵկ) Աղ չեղաւ:
 ՊՐԻՃ. — Ծատ աղէկ. (մԵկ) հոս կենալ չըլլար (մԵկին):
 ԲԵՅԹ. — (սանդուղին իջնալով) Բարի եկաք ՊՐ. Փարփա-
 նիկոս:
 ՓՈՒ. — Հէ ադ ո'վ է:
 ԲԵՅԹ. — Հիւրդ, որ արդէն զքեզ ձանչնալու բարեբախ-
 տութիւնն ունեցած էր:
 ՊՐԻՃ. — (մՏնէ եւ մԵկ) Այս մարդը հո՞ս չըլլայ թէ:
 ՓՈՒ. — Այս, կը յիշեմ,
 ԲԵՅԹ. — Կուզայ իր շնորհակալութիւնը յայտնել այս գի-
 շերուան ընդունելութեանդ համար:
 ՓՈՒ. — Շնորհակալ եմ այդ քաղաքավար ընթացքէդ,
 բայց, կը կարծէի որ այս ժամուս քնացան ես:
 ԲԵՅԹ. — Կը ծխէի, երբ դրան զարնուիլը լսեցի, (մԵկ) ժարպետ ստախօս մը ըլլալու համար կնկան մը քով կէս ժամ
 կենալը բաւական է, (բարձր) իջնելէս վերջը փոքրիկ շնորհք
 մը կը խնդրե՞ս ձեզմէ.
 ՓՈՒ. — Խօսեցէք:

ԲԵՅԹ. — Քովս ուտելիք բան մը չունիմ, ստակս տայի
 քիչ մը ինծի կերակուր ճարէիք:
 ՓՈՒ. — Ես ալ քու վիճակիդ մէջ եմ, բայց կինս կ'ըսէ
 որ տանը մէջ ուտելիք բան մը չի կայ:
 ԲԵՅԹ. — Ի՞նչ զժբախտութիւն ստակով ալ բան չի գտնուի
 ՊՐԻՃ. — Տէր իմ, այս ժամուս, լերան մը գլուխը ի՞նչ
 ուտելիք պիտի գտնաս:
 ԲԵՅԹ. — Գլուխս պատին զարնելու եմ. (կը մՏնէ):
 ՓՈՒ. — Հաւեկիթ ալ չի կայ տանը մէջ, կնիկ:
 ՊՐԻՃ. — Հատ մ'իսկ չի կայ:
 ՓՈՒ. — Յուսահատելի բան է:
 ԲԵՅԹ. — (մԵկ) Հրացանը պիտի պարպեմ (բարձր) ի՞նչ
 գդում գուխ ունիմ եղեր, գաայ, մելի ուտելիք դասայ:
 ՓՈՒ. — Ի՞նչպէս, ըսէ տեսնենք:
 ԲԵՅԹ. — Վրաս պիտի խնդաք, բայց հոգ չէ, ուտելնէդ
 ետքը կը գոհանաք. 12 տարի է որ ձամբորդութիւն կ'ընեմ:
 ՓՈՒ. — Ասիկա կերակուրի հետ վերաբերութիւն չունի:
 ԲԵՅԹ. — Մաճապարեր, Սպանիոյ պատերազմի ատենս
 վհուկ մը ձանցայ:
 ՓՈՒ. — Աղ ի՞նչ գէշ բան է:
 ԲԵՅԹ. — Նոյն վհուկը ինծի շատ մը զիւթութիւններ սոր-
 վեցուց:
 ՓՈՒ. — Անդին գնա՛, գնա՛, ուր տեղէն գլխււս փրթար:
 ԲԵՅԹ. — Մի՛ վախնար, իմ զիւթութիւններս միշտ աղէ-
 կի կ'ելլեն. ես կարող եմ օրինակի համար զիս անարգող կը-
 կան մը ինքինքս այնչափ սիրցունել՝ որ զայ ոտքերուս իյ-
 նայ, կնկան մը անհաւու տարմութիւնները երեւան կը հա-
 նեմ, ուրուսկաններ կը քուցնեմ, ասկէց զատ, կարող եմ կե-
 րակուրներ վերցնել և ամենահեռաւոր մարդիկը հոս բերել,
 որ զածիս պէս:
 ՓՈՒ. — Ատիկա պարսն, ինծի չես կրնար կլլեցնել, փոր-
 ձին նայինք, փորձին:
 ԲԵՅԹ. — Երկու վայրկեանէն փորձով պիտի հաստատեմ,
 երթամ զիւգական մատեանս ու զաւագանս առնեմ, զու եր-
 կու ճրագ պատրաստէ. (անդուխին ելնէ):
 ՓՈՒ. — Դուն ի՞նչ կ'ըսես ասոր, կնիկ:
 ԷՐԻՃ. — Ես կ'ըսեմ թէ յիմար մ'է և զուն ալ շատ միա-
 միտ ժարդ մ'ես, որ անոր կարեւորութիւն կուտասաւ:
 ՓՈՒ. — Համբերենք նայինք, ի՞նչ պիտի ընէ:
 ԲԵՅԹ. — (իերազարնալով) Ահա եկայ:

ՓԱՐ. — Բայց թէ որ չյաջողիս՝ վրադ պիտի խնդանք,
ետքը չի վշտանաւ:

ԲԵԹ. — Ձեզի բան մը ըսկ՞մ, ես պատուաւոր մարդ մըն
եմ, եթե խոստումս չի կառարեմ, հարիւր ֆրանք պիտի տու-
ժեմ, բայց եթէ յաջողիմ, կը խոստանա՞ք որ այս իրիկուն
ձրիաբար զիս սնուցանէք:

ՓԱՐ. — Կը խոստանամ:

ԲԵԹ. — Ուրեմն փորձի սկսիմ, նախ պէտք է գիտնամ թէ
տանը մէջ ո՞վ կայ:

ՊՐԻՃ. — (մեկ.) Գէշ սկսաւ:

ՓԱՐ. — Ո՞վ պիտի ըլլայ, ահա ես, կիսո և դու:

ԲԵԹ. — Տեսնենք քիչ մը ետքը կը խօսինք: Ես հիմա
կը խոստանամ ձեզի հոս բերել քանի մը տեսակ կերակուր,
նայինք որին կերակուրը պիտի վերցնեմ:

ՓԱՐ. — Ես ի՞նչ գիտնամ:

ԲԵԹ. — Սարձանիոյ գիւղին մէջէն:

ՓԱՐ. — Սարձանի՞ա, մեր բնակած զիւզն է. ո՞հ ո՞վ կըը.
Նայ ըլլալ արգեօք այդ թշուառը:

ԲԵԹ. — Գիւղիս վարժապետը, որ դաս կրնայ տալ որկ-
րամոլութեան:

ՓԱՐ. — Գիւղին վարժապետը մի՛. ի՞նչ աղէկ բան:

ՊՐԻՃ. — (մեկ.) Վարժապետին անունն ալ տուաւ հիմա
կը մեռնիմ:

ԲԵԹ. — Ճրագները դեղին չըլլալուն՝ այս դեղին թզթով
քիչ մը պիտի վարդուրեմ լոյսը:

ՓԱՐ. — Աս ի՞նչ վախ մը մատաւ սրտիս մէջ:

ԲԵԹ. — Զեւերէս, շարժումներէս, ըսելիքներէս ու ընե-
լիքներէս բնաւ մի՛ վախնաք:

ՓԱՐ. — Շունչա կը բանեմ ահաւ:

ԲԵԹ. — Մոսցայ ըսելու թէ մարդ գտածը ուտելու է:

ՓԱՐ. — Աւսելիք բան մը բլլայ աէ՛ ինչ կ'ուզէ բլլայ:

ԲԵԹ. — Երթամ (խորը երբայ ծաղրական ձեւեր կ'ընե):

ՓԱՐ. — Դուն ի՞նչ կ'ըսես կնի՛կ, չելլես վախնաւ:

ՊՐԻՃ. — Ես քեզի պէս ապուշ չեմ:

ԲԵԹ. — Կայ ջութակ և թըմբուկ, ձնձղայ, զաշնակ և
դաշնամուր, կեցէ՛ք:

ՓԱՐ. — (սարսափով) Ո՞վ կը կանչէ, կնի՛կ:

ՊՐԻՃ. — Սատանաները, որ գինքը ասկէ առնեն ատնին:

ԲԵԹ. — Փարփանիկոս տակաւնին չի ճաշեց:

ՓԱՐ. — Ո՞չ ըսի, պարոն տակաւին չեմ ճաշած:

ԲԵԹ. — Հիմա կերակուրներուն անունը պիտի տամ: Նախ
և առաջ՝ երշիկ կայ, ակուայիդ կ'ուզա՞յ:

ՓԱՐ. — Ի՞նչ ըսել է, անով աղէկ կը խմուի, բայց ոյժ
տուող բան մը չի կա՞յ:

ԲԵԹ. — Ուրախացիի՛ր, խոչոր պնակ մը մաքառնեայ:

ՊՐԻՃ. — (մեկ.) Այ անօրէն, զիս կը մատնէ:

ՓԱՐ. — Կնի՛կ, մաքառնեայ կայ եղեր:

ՊՐԻՃ. — Իմ ախորժակս գոցուեցաւ:

ԲԵԹ. — Պարոն Փարփանիկոս, աւելին կայ, խոզի մը
խորոված ազդը:

ՓԱՐ. — Խոզի մը ազդը: հիմա կը թոցնեմ. ալ բաւա-
կան է. մացածն ալ իրեն տուր որ ուտէ:

ԲԵԹ. — Զէ՛ չէ՛, ունեցածը չունեցածը պիտի վերցնեմ:
ՊՐԻՃ. — (մեկ.) Կայծակ իջնէ գլխուղ:

ՓԱՐ. — Այդչափ քար սիրտ մըլլար. իրեն ալ ձգէ:

ԲԵԹ. — Ահա մնացածը, աղցան, պանիր, հաց և շաշ զինի:
ՓԱՐ. — Ո՞վ երջանկութեան:

ԲԵԹ. — Գտիր նայիմ այս ամէնը ո՞ր կողմ բերել տուի:

ՓԱՐ. — Ես ի՞նչ գիտնամ:

ԲԵԹ. — Հոս վարի մառանը:

ՓԱՐ. — Մառան մի՛, կնի՛կ, քալէ երթանք նայինք:

ՊՐԻՃ. — Բանալին վրաս չէ՛:

ԲԵԹ. — Գաւազգանս բանալիին գործը կը տեսնայ:

ՊՐԻՃ. — (մեկ.) Օր առաջ լմնայիր:

ՓԱՐ. — Աս ի՞նչ կարգէ զուրու բան է: Սըկոր նայեցէք.
գաւազգանը բանալիին զործը տեսնաւ:

ԲԵԹ. — Ահա բացուեցաւ:

ՓԱՐ. — Ո՞վ զարմանք: կ'առնեկ:

ԲԵԹ. — Ահա բածներս կողովին մէջն է. (կողովը վեր

ՓԱՐ. — Ելիք կնի՛կ սեղունը պատրս սաէ որ ուտենք.

ՊՐԻՃ. — Տեղէս չեմ երերար խենցենալու միտք չունիմ:

ՓԱՐ. — Անուշութեամբ խօսք չհասկնաւ նէ երպս կը
փոխեմ:

ՊՐԻՃ. — Ահա սեղանը, կե՛ր խմէ՛. ձո թէ՛. (մեկ.) Կե-
րածնելու փորենուոգ մէջ օձեր զառնան:

ՓԱՐ. — Նստէ՛ կեր նայիմ, աղւորիկոս:

ՊՐԻՃ. — Ես ուտեմ, թուն ըլլայ:

ՓԱՐ. — Բարեկութիւնոց ո՞րի է:

ԲԵԹ. — Մի՛ բարեկունաք սիրին բան մը չէ:

ՓԱՐ. — Իմ սիրունիկս, նստէ՛ կեր ու ինձ մտիկ ըրէ:

ՊՐԻՃ. — (մեկ.) Ալ համբերութենս կը հատնի:

Բէթ. — Քեզ տեսնեմ ափկին Պրիճիտէ:
 ՓԱՐ. — (ուժելով) Ի՞նչ աղւոր երդիկ. ը՛հ, ը՛հ, ը՛ը՛ք
 սա մաքառնեաին ալ համը առնենք:
 Բէթ. — Կեցիր որ բաժնեմ. այստափը ափկնոջ, այստ-
 ափ քեղի, աս ալ ինձի:
 ՓԱՐ. — Մա՛, մա, մա, աս ի՞նչ համով բան է:
 Բէթ. — Վարժապես ըստիդ կերպուրը ասանկ կ'ըլլայ,
 անսեսին հետ խօսք-մէկ՝ աս աեղէն ան աեղէն ըսելով՝ բո-
 լոր ոգ որ կերու կուրները իրենց փորը կը նետեն:
 ՓԱՐ. — Մեր գեղի վարժապեսն ալ բատծիդ պէս է:
 Իշթ. — Դո՞ւք ալ վարժապետ ունիք:
 ՓԱՐ. — Այո՛, և իմ կողակցիս ազգականներէն է եղեր:
 Բէթ. — Սիրուն Պրիճիտէ. աս մեղի պատահածը իրեն
 ալ պատէ որ աղէկ մը խնդայ:
 ՊՐԻՃ. — (մեկուսի) Աս սրիկան ուսկի՞ց գլխուս փրթուտ:
 ՓԱՐ. — Ի՞նչ եղեր ես այս իրիկուն կնիկ:
 ՊՐԻՃ. — Ապո՞չ:
 ՓԱՐ. — Ըսէ՛, սա սեղանը վերցուր նայիմ. (կինը
 բարկութեամբ սեղանը կը վերցնէ) Ի՞նչ կ'ընես... պարծե-
 նալու համար չէ. բայց ես այն էրիկներէն յեմ որ կնիկներէն
 կը խարուին, այն էրիկներէն՝ որոնց գիւռանք կը բե-
 րեն կնիկներնին. (Պրիճիս մեկնի) Ի՞նչ որ սիրեցեալ բարե-
 կամս, այս ըրածիդ փոխարէն կ'ուզեմ որ սնդում մը զքեզ
 համբուրիմ... բայց չէ... կը փախնամ քովզ մօտենալու միայն
 թէ քեզմէ բան մը պիսի խնդրի:
 Բէթ. — Ի՞նչպէս:
 ՓԱՐ. — Աս արհեստդ ինձի ալ սորվեցնես. վասն զի
 շատ անգամ պէտք կ'ըլլայ ինձի:
 Բէթ. — Ասոր վրայ ետքէն կը խօսինք հիմայ սոսկալի
 զիւտ մը պիտի ցուցնեմ քեզի որ իմ արհեստիս զլուխ զոր-
 ջոցը կը համարուի:
 ՓԱՐ. — Ասոկալի գիւտ մի՛ հիմակուց սկսայ զողութ:
 Բէթ. — Բան մը որ զքեզ պիտի զարմոցնէ և թերեւո
 զոխոնէ բայց ես հսկ եմ. ամենենին մի վախնար:
 ՓԱՐ. — Շուտ բրէ ինչ է նէ զորցէ:
 Բէթ. — Ոչինչ բան առնդ մէջ ուրաւոկան մը պահած ես
 որ քիչ մը հանգստութիւնդ պիտի աւրէ:
 ՓԱՐ. — Ուրաւոկան մի՛... ա՛հ զթութէն:
 Բէթ. — Հոգ մի՛ բնիք. ես անիկու կը վոնտեմ:
 ՓԱՐ. — Բայց ո՞ր կողմին է բա՛տ որ ս'րաս հանգարտի:
 Բէթ. — Մասսնը պո հուս ծ է:

ՓԱՐ. — Մառանը... վա՛յ ինձ.
 Բէթ. — Բնաւ աչքիդ զարկած չէ^o:
 ՓԱՐ. — Ո՛չ... բայց այսու... երբեմն.
 Բէթ. — Բան մը իմացա՞ծ ես:
 ՓԱՐ. — Զգիտեմ դոզ մը առաւ զիս:
 Բէթ. — Տղայութիւն պէտք չէ, հոս եմ ես:
 ՓԱՐ. — Կեցիր.
 Բէթ. — Ի՞նչ կայ:
 ՓԱՐ. — (կը կանչէ) Պրիճիտէ', Պրիճիտէ':
 Բէթ. — Ի՞նչ կուղես:
 ՓԱՐ. — Կեցիր կըսեմ, Պրիճիտէ', Պրիճիտէ':
 ՊՐԻՃ. — (Մսած ատենը) — Ի՞նչ կուղեմ:
 ՓԱՐ. — Եկուր, հարցուցածիս պատասխան տուր:
 ՊՐԻՃ. — (Մեկուսի) Վայ ինձ. թէ որ զիս մատնեց:
 ՓԱՐ. — Տանը մէջ բան մը իմացա՞ր.
 ՊՐԻՃ. — Բա՞ն մը... ի՞նչ բան:
 ՓԱՐ. — Մինակ եղած ատենդ վայնասուն մը լսեցի՞ր:
 ՊՐԻՃ. — (մեկուսի) Ո՛հ հանդարացաց. (բարձր) Ի՞նչ աղ-
 ւոր հարցում, չես զիսեր որ այս լեռներուն վրայ հովը տու-
 ներն անգամ կ'երեցունէ:
 ՓԱՐ. — Ի՞նչ իսկ... ի՞նչ լեռ... ի՞նչ տուն, մառանին
 մէջ խոշոր ուրուական մը կայ եղեր:
 Բէթ. — (մեկուսի) Ո՛վ հարուած:
 ՊՐԻՃ. — (մեկուսի) Կորուեցաց. (բարձր առ Բէթ.) ա՛հ,
 պարոն... շնորհք:
 ԲԱԹ. — Մի՛ վախնաք տիկին, ես զայն պիտի փախցնեմ:
 ՊՐԻՃ. — Կ'աղաքեմ որ...:
 Բէթ. — Աս տունէն վանտելս կ'ուզէք, այնպէս չէ^o:
 ՓԱՐ. — Հապա՞ ։ կ'ուզեքն ալ խօ՞սք է:
 Բէթ. — Ուրեմն սիրտ ա՛մ Պ. Փարբանիկոս, աղւոր տե-
 ղը հասանք, ձեռքդ զաւազան մը ա՛մ որ ըսածս ընես:
 ՊՐԻՃ. — (մեկուսի) Խեզձ Բանկրատիսու:
 ՓԱՐ. — Զաւակացդ արեւուն համար ըլլայ՝ ինձի կուրի
 մէջ մի՛ զնիք ։ ընտանեաց տէր մարդ եմ ես:
 Բէթ. — Ո՛հ պարապ խօսքեր չուզեր, գաւազանը ձեռք
 առ և մի վախնար նշան ըրածիս պէս անոր վրայ ինկիր և ա-
 զէկ մը ծեծէ որ մէյ մ'ալ հսու ոտք չի կոխէ (զաւազան մը
 կուտայ):
 ՓԱՐ. — Զեռքէս եկածը կ'ընեմ. բայց...:
 Բէթ. — Ուշագրութիւն... գործի կ'ոկոխմ. (մառանին
 գուոր կը բանայ):

ՓԱՐ. — Ծնկուըներս սկսած դողղղալ:

ՊՐԻՃ. — (մեկուսի) Հիմա կը մեռնիմ:

ԲԱԹ. — Ոգի՞դ ուրուական, կը հրամայեմ, ըրէ՛
բասծս ո՞վ անգնդապետ:

ՓԱՐ. — ի՞նչ սոսկալի անուն:

ԲԵԹ. — Դուրս ել կըսեմ քեզի, թէպէտեւ պատու-
հանէն կրնայի հանել բայց ո՞ո՞ կըլլամ զոնէն վանտե-
րով. ե՛լ կըսեմ:

ՊՐԻՃ. — (մեկուսի) Ա՛հ Բանկրատիոս:

ԲԵԹ. — Դուրս ե՛լ, ապա թէ ոչ՝ խայտառա-
կաբար կը հանեմ քեզ. կը հասկնա՞ս, ահա վերջին ան-
գամ կըսեմ, դուրս ելիր; Փարբանիկոս պատրաստ կեցի՞ր:

ՓԱՐ. — Բայց ծնկուըներս կոտրտեցան, աչքս չեմ
կրնար կոր վեր վերցնել:

ԲԵԹ. — Փախի՞ր, դուրս ելիր. ահա կուպայ, (Բան-
կրատիոս զլուխը վերարկուով ծածկած մառանէն դուրս
կ'ելլե եւ Պրինիսին ուուրջը կը դառնայ):

ՓԱՐ. — Ա՛հ հիմա կը մեռնիմ:

ԲԵԹ. — Ահա քեզի ձամբայ կը ցուցնեմ քեզ տես.
ՆԵԺ (կը ծեծէ):

ՓԱՐ. — (ծեծելով) Ա՛յ, ա՛յ, ինչ սոսկալի սև սատանայ:

ԲԱՆԿ. — Ա՛յ, ա՛յ, օգնութիւն, իմ սիրուն Պրի-
ճիտէս օգնութիւն:

ՊՐԻՃ. — (մեկուսի) Հիմա կը մեռնիմ, (Բանկրատիոս
կը փախչի):

ՓԱՐ. — Տեղէս երերալու կը վախնամ. (կը դողդդայ
կեցած տեղը):

ԲԵԹ. — Ահա եկայ, մի՛ վախնար, ես եմ:

ՓԱՐ. — Ա՛հ քովէս մի հեռանար. կէս ողջ կէս մե-
ռած կը սեպուիմ:

ԲԵԹ. — Դուն ի՞նչ կըսես տիկին Պրիճիտէ:

ՊՐԻՃ. — Դեռ կը հարցունես,

ԲԵԹ. — Փաթորիկը անցաւ, սիրտ առ:

ՊՐԻՃ. — Այո՛, բայց . . .

ԲԵԹ. — Ի՞նչ որ է, եղածր եղած է, երթանք հանգ-
չինք, խօսք կուտամ որ ալ քեզ այս զիշեր անհանգիւս
չընեմ. սինակ սա փոքրիկ օրինակը կրնանք ոռնել ե-
ղածներէն թէ՛ շատ անգամ կը պատուհի որ մէկը ծախ-
քեր կ'ընէ և ուրիշ մը կը մայելէ:

Գ. Ե. Ռ. Զ.



ԽԱՀՈՒՆ Մատենաւորի

ԹԱՏԵՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Լ. Դ.

1.—ՏՐՈՎԱԴԱՑԻ ՀՐԴԵՀԸ	75
2.—ԹՈՐՈՍ ԾԱՌԱՅ	75
3.—ՄԵՐ «ԱՄԱԹԷՅՈՐ» ՆԵՐԸ	80
4.—ՀՕՅ ԴՊՐՈՅԸ	100
5.—ԽԵԶՈՒՆ ԹՈՒԶԸ	50
6.—ԱՒԱՐԾՅՐԻ ԱՐԾԵՒԻԸ	150
7.—ԵՐԿՈՒ ԽՈՒՆԵՐ	50
8.—ԱՍԻՋՅ ՍԱՓՐԵԶԸ	50
9.—ԳԴՈՒՄԻ ՎԱՃԱՌԱԿԱՆԸ	75
10.—ՍԱՏԱՆԱՅ	35
11.—ԹԻՔ ԹԱ.Ք	75
12.—ՄՈԼՈՐԵԱԼ ՀԱՄԲՈՐԴԸ	50
13.—ԿԱՌՔԻ ՄԸ Ա.ՊՎԱՆ	50
14.—ՄԱՐԴԱՍՊԱՆՈՒԹԻՒՆ ՄԸ	50
15.—ԽՏԵԱԼ ՄԸ	25
16.—ԶՈՐԸ ՍԱԼՈՐՆԵՐԸ	30
17.—ՍԵՒ ԹԷ ՀԵՐՄՈՎԿ	30
18.—ԵՐԿՈՒ ԾԱՅՐՈՅԵՎՆԵՐ	75
19.—ԵՐԵՎ ՔԱԶԵՐ	75
20.—ԱԿԱՄԱՅ ՄԵՌԵՆԵՐԸ	50

Կ. Տօնիկեան Գրատունը կը հայրայք ամէն տեսակ
գիրքեր, կը կատար փոխանակութիւն՝ գրավաճառ և նեղի-
նակներու հետ, իր սեփական հրատարակութիւններով:

2013

